# ՆԿԱՏՎԵԼ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՎԵՐԱՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԿՈՒՏԱԿՈՒՄ

Ղարաբաղա–ադրբեջանական հակամարտության գոտում իրավիճակը մնում է անփոփոխ: ԼՂՀ Պաշտպանության բանակի շտաբից հաղորդել են, որ հակամարտող կողմերը ձեռնպահ են մնում ռազմական ակտիվ գործողություններից: Միաժամանակ, ադրբեջանական բանակը շարունակում է զինադադարի փոքր խախտումների պրակտիկան՝ ժամանակ առ ժամանակ հրաձգային զենքից գնդակոծելով ղարաբաղյան ուժերի դիրքերը: Տուժածներ չկան: Ղարաբաղյան բանակի ստորաբաժանումները՝ խստորեն կատարելով հրամանատարության հրամանը, պատասխան գործողություններ չեն ձեռնարկում: Ըստ ԼՂՀ ռազմական հետախուզության շտաբի տվյալների, ռազմաճակատի մի շարք հատվածներում նկատվում են հակառակորդի կենդանի ուժի, այդ թվում թուրքական «Մոխրագույն գայլեր» ռազմականացված կազմակերպության երեք ստորաբաժանումների վերատեղաբաշխում եւ կուտակում: